ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹ

XIV

ԵՐԵՎԱՆ 2007

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РА
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

НАРОДНАЯ КУЛЬТУРА АРМЯН

XIV

**Материалы
республиканской научной сессии**

**REPUBLIC OF ARMENIA
NATIONAL ACADEMY OF SCIENCES
INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY**

ARMENIAN FOLK CULTURE

XIV

Republican Scientific Conference

Издательство “Гитутюн”
ЕРЕВАН - **YEREVAN 2007**

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹ

XIV

Նյութեր
հանրապետական գիտական նստաշրջանի

ԵՐԵՎԱՆ
«Գիտություն» հրատարակչություն
2007

ՀՏԴ 008(091)
ԳՄԴ 71դ
Հ 240

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիրներ՝
Ս.Բ. Հարությունյան
Ս.Գ. Հոբոսյան

Հ 240 Հայ ժողովրդական մշակույթ. – XIV պրակ
Նստաշրջանի նյութեր. - Եր., «Գիտություն»
հրատ. 2007, 340 էջ:

ԳՄԴ 71դ

ISBN 978-5-8080-0710-9

© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2007
© ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 2007

Համլիկ Գալստյան
ՀԱԻ

ՍՆԱՀԱՎԱՏԱԿԱՆ ԶՐՈՒՅՑՆԵՐ
(ըստ Վահրամաբերդ գյուղի սուրբ գրքերի վերաբերյալ պատմությունների)

Սնահավատական զրույցը մեկ դրվագով պատմվածք է ժողովրդական այս ու այն հավատալիքի կամ պատկերացման մասին: Զրույցի նպատակն է ունկնդրին տեղեկություն տալ հավատալիքի, պատկերացման վերաբերյալ, հավատ ներշնչել նյութի հավաստիության նկատմամբ: Այն ունի հուշապատման բնույթ, իբրև պատմողի կամ նրա բանավոր սկզբնաղբյուրի հետ մոտ կամ հեռավոր անցյալում պատահած իրական դեպք: Սնահավատական զրույցի և այն կրողների ժամանակը մոտ է: Գործողությունը կատարվում է բանասացի կամ նրան քաջ հայտնի մի անհատի հետ:[1]

Հայկական սնահավատական զրույցները կարելի է բաժանել երկու խմբի՝ կրոնական և աշխարհիկ: Առաջին խմբում շեշտված են հավատի ու դավանանքի հետ կապված հարցերը, իսկ երկրորդում՝ աշխարհիկ: Զրույցների այդ երկու խումբն էլ ունեն միևնույն վերջնանպատակը՝ քաղաքական, պետական, հայրենասիրական գաղափարներ:[2]

Կրոնա-դավանաբանական զրույցները պայմանավորված են ժամանակի հասարակական-քաղաքական կյանքով, ստեղծագործություններ, որոնք պատմվում են հավատ ու երկյուղածություն ներշնչելու, ավետարանական որևէ կանոն հաստատելու կամ քրիստոնեական վարդապետություն քարոզելու համար: Սակայն դրանք ստեղծվել են պատմական իրադրությունների հիման վրա և հետապնդել կոնկրետ նպատակներ: Այս զրույցներում առաջ են բերվում այն իրա-

---

[1] *Ա. Ղազիյան*, Հայ ժողովրդական սնահավատական զրույցների դասակարգման հարցի շուրջ, Լրաբեր, 1983, N-8, էջ 77:
[2] *Ա. Սրապյան*, Հայ միջնադարյան զրույցներ, Եր., 1969, էջ 72:

դրությունները, որոնք գոյություն ունեն մարդու և՛ ներքին և՛ արտաքին հասարակական-քաղաքական ու գաղափարական կյանքում:

Շիրակը հայտնի է ոչ միայն հուշարձաններով, վանքերով ու տաճարներով, այլև, այսպես կոչված, «Տան սրբերի» առատությամբ: Դրանք որոշ ընտանիքների պատկանող սուրբ գրքեր են՝ Ավետարաններ, Նարեկներ կամ ձեռագրերի պատառիկներ: Կարծիք կա, որ «Տան սրբերն» ընդհանրապես սրբազան գործառույթ ունեցող իրեր են՝ հիմնականում սրբազան բովանդակությամբ գրավոր մասունքներ, որոնց մեր ժողովուրդն օժտել է հաճախ սրբերին բնորոշ հրաշագործ և պահպանիչ հատկություններով»:[3]

Սրբերը ժողովրդի պակերացմամբ վերացական և աներևույթ ոգիներ չեն, այլ մարդկային հատկանիշներով օժտված անձինք: Նրանց վերագրվող հրաշքները ինքնաբավ զվարճալիքներ չեն, ունեն սոցիալական խոր իմաստ և հիմնված են մարդուն օգտակար լինելու ցանկության վրա: Սերտորեն կապվելով առօրյա կյանքի հետ՝ ավանդությունների սրբերն ու աստվածները ամեն կերպ օգնում են մարդուն, թեթևացնում նրա աշխատանքը:[4]

Ներկայացվող զրույցներում գործող անձինք Սուրբ գրքերն են և Շիրակի մարզի Վահրամաբերդ գյուղի բնակիչները, որոնք անմիջական առնչություն են ունեցել և հիմա էլ ունեն Ավետարանների հետ:[5]

Վահրամաբերդում շատ հարգի են «Կարմիր Ավետարան» և «Շեկ Ավետարան» անուններով սուրբ գրքերը: Նման անվանումները նրանց տերերը բացատրում են այսպես. «երազում պապը[6] երկար ու շեկ մորուքով է հայտնվում, դրա համար էլ իրենց սուրբ գիրքը կոչում են «Շեկ Ավետարան» կամ՝ «Մեր պապը հայտնվում է կարմիր շորերով» այլն, որոնք, մեր կարծիքով, հեռու են իրականությունից:

Մշո հռչակավոր «Կարմիր Ավետարանը» կոչվել է նաև «Կարմիր երեցի Ավետարան»: Տեր Կարապետը՝ նույն ինքը Կարմիր Երեցը, 1809թ. երրորդ անգամ ոտքով ուխտի է գնում Երուսաղեմ: Անբասիր ծառայության համար նա նվեր է ստանում Ավետարան և ասեղնա-

---

[3] Հ. *Մարության*, Տան սրբերի շուրջ, Եր., 2001, էջ 58:
[4] *Գր. Գրիգորյան*, Հայ ժողովրդական բանահյուսություն, Եր., 1980, էջ 287:
Պատմություններն ու զրույցները գրի ենք առել Վահրամաբերդ գյուղում՝ 2005-06թթ:

գործ կարմիր թիկնոց, որի համար էլ Սուրբ գիրքը ստանում է «Կարմիր Ավետարան» անվանումը:

Ժողովրդի բնութագրմամբ Սուրբ գրքերը հրաշագործ և բուժիչ հատկություն ունեն: Հավատում են, որ դրանք կենդանի էակներ են՝ օժտված մարդուն բնորոշ հատկանիշներով, պահանջում են հնազանդություն, ուշադրություն, նվիրվածություն, որոնց բացակայության դեպքում կարող են պատժել հավատացյալներին՝ հավատի մեջ թերանալու համար:

Փորձել ենք ներկայացնել ոչ միայն Վահրամաբերդ գյուղի «Տան սրբերի» և Սուրբ գրքերի հետ կապված պատմությունները, երազները, այլև տեղեկություններ տալ, թե որտեղի՞ց, ո՞ւմ միջոցով և ինչպե՞ս են դրանք հայտնվել այնտեղ:

Վահրամաբերդը (նախկին Ներքին Ղանլիջա) հայտնի էր ոչ միայն Մարմաշեն վանական համալիրով, այլև **Ղանլիջայի Կարմիր Ավետարանով**: 1890-ական թվականներին այդ գյուղացի Գալոն երազում ինչ-որ ձայն է լսում. «Ես Արփաչայի մեջն եմ՝ Թոփ քարի տակը, փրփուրն էլ վրես պտրտվըմ է, արի ու ընձի հանե ըստեղից»: Խոսքը Կարմիր Ավետարանի մասին էր: Երբ թուրքերը հարձակվել են Վահրամաբերդի բնակիչներն անցել են «Յամաջը»: Փախուստի ժամանակ Ավետարանն ընկել է գետի մեջ: Դա Գալոյի երազից ուղիղ յոթ տարի առաջ է եղել (Ավետարանն իբր յոթ տարի մնացել էր ջրի տակ):

Հաջորդ օրը Գալոն գտնում է Թոփ քարը, Ավետարանը հանում է ջրից և տեսնում, որ այն չոր է, և առաջին յոթ էջերի ներքևի աջ անկյունները մի մատնաչափ դեղնած են:

Ըստ ականատեսների՝ գիրքն ունի 20x30սմ չափեր, կաշվե կազմ՝ փոքր արծաթյա խաչով: Կազմի խաչը զարդարված է կարմիր, կանաչ, կապույտ և դեղին քարերով: Գրքի թերթերը մագաղաթից էին՝ զարդարված գունավոր մանրանկարներով:

Մինչև 1927թ. Կարմիր Ավետարանը պահվել է Ներքին Ղանլիջա գյուղում՝ Մարմաշեն վանքից դեպի արևելք գտնվող տներից մեկում, որտեղ այժմ մատուռ է կառուցված:

1927թ. գյուղը տեղափոխվում է այժմյան Վահրամաբերդ: Ավետարանը գյուղում մնում է մինչև 1974թ. դեկտեմբերի 17-ը: Նախորդ օրը գյուղացիներից Ջինա անունով մի կին երազում տեսնում է, որ իրեն

փաթաթել են կարմիր ժապավենով: Նա էլ ասել է, թե ինքը ջահել է, ի՞նչ է անելու կարմիր ժապավենը, և որ այն հանեն իր վրայից:

Դեկտեմբերի 17-ին Կարմիր Ավետարանը գողանում են մատուռից: Հարևանությամբ բնակվող Արաքսյան ականատես է լինում գողությանը, բայց «Աստված խանգարել է նրան ետ պահել գողերին, ոտքերը առաջ չեն գնացել, աչքերը տեսել են, իսկ լեզուն՝ պապանձվել: Ավետարանն այդպես է կամեցել: Նա որոշել է հեռանալ իր խնամակալներից»:

Ժողովրդի պատկերացմամբ սուրբ գրքերն էլ, ինչպես մարդիկ, հերելու, պատժելու, խռովելու, սատարելու և այլ հատկանիշներ ունեն: Նրանց պետք է փայփայել ու գուրգուրել, պարուրել անկեղծ ու անմնացորդ սիրով: Միջին դարերում ևս չէին ասում, թե ձեռագիրն ավար տարան կամ ձեռագիրն ավարառությունից ազատեցին, այլ՝ ձեռագիրը գերի տարան, ձեռագիրը գերությունից ազատեցին: Ձեռագրի վրա նայել են իբրև սրբության, ինչպես շնչավոր էակի:[7]

Ղանլիջայի Կարմիր Ավետարանը խնամում էր Պասո մամը: Պատմում են, թե երաշտի ժամանակ նա Ավետարանը պահում էր դեպի արևելք, աղոթում, աստծուց անձրև խնդրում, որը կատարվում էր կամ կարկուտը փոխարինվում էր անձրևով: Գրեթե ամեն շաբաթ և՝ Պասո մամը, և գյուղացիները, և՝ բազմաթիվ հավատացյալներ մատաղ էին անում Կարմիր Ավետարանի անունով: Այնքան մեծ է եղել գյուղացիների սերն ու հավատն առ Ավետարան, որ այն իր տեղն է գտել նաև ժողովրդի քնարական բանահյուսության մեջ.

Արև դրբավ գերանին,
Մեռնիմ ավետրրանին,
Ավետրրան ուխտ էրի
Սրտիս ուզածը ճարի:

Մազերս հուսի, ուխտ էրի
Սիպրրտանցս ջուխտ էրի:
Ավետրրան ուխտ էրի,
Սրտիս ուզածը ճարի.[8]

Վահրամաբերդի բնակիչները բազմաթիվ «իրական» դեպքեր են պատմում Կարմիր Ավետարանի զորության, նրա կատարած հրաշքների, բժշկության, երազատեսության մասին.

---

[7] *Ա.Գ.Աբրահամյան*, Հայոց գիր և գրչություն, Եր., 1973, էջ 326:
[8] Բանասաց Ռոզա Գևորգյան, ծն. 1927թ.:

1. 1930-ական թվականներին Կարմիր Ավետարանը խռովել է Պասոյից ու գնացել:[9] Կորուստը կնոջը խելագարության է հասցրել: Մի անգամ երազում Ավետարանը նրան ասում է. «Ջանֆազի հետ արի Սրբի սար,[10] ես այնտեղ եմ»: Առավոտյան վազում է Ջանֆազի մոտ ու լացով խնդրում իր հետ գնալ սրբի սար ու ետ բերել Ավետարանը (Ջանֆազը նույնպես հավատացյալ կին էր, 1915թ., կորցնելով ողջ ընտանիքը, Մշո Արտոնք գյուղից գաղթել ու ապրում էր Ղանլիջայում): Երկուսով բարձրացել են Սրբի սարի գագաթը: Օնկաչոք մոտենալով մատուռին՝ տեսել են, որ գիրքը դրված է սրբի գերեզմանին: Պասոն վերցրել է այն, կարոտով սեղմել կրծքին ու վերադարձել են տուն:

2. Վահրամաբերդցի Վասոն 1970-ական թվականներին իր հարևանուհուն՝ Սիրուշին մի երազ է պատմում: Երազում Կարմիր Ավետարանը գալիս է ու ասում. «Արի ծոր[11] ու գառ մադղե»: Առավոտյան Վասոն ինքն իրեն ասում է. «Գառ չունիմ, ո՞ւրդից մադղեմ»: Այդ գիշեր երազը կրկնվում է, և Կարմիր Ավետարանը ասում է. «Արի, մատաղդ էրա, ես գառը կուդամ»: Հաջորդ օրը առավոտյան մի քանի հոգով գնում են ծոր՝ Կարմիր Ավետարան ուխտի: Վասոն տեսնում է, որ մատուռի կողքին՝ փոսի մեջ, մի գառ է մայում: Մատաղ է անում գառը Կարմիր Ավետարանին ու վերադառնում տուն:

3. Ավետարանը ոսկյա խաչ է ունեցել, որը պահվել է տան ընդհանուր ոսկեղենի հետ: Մի անգամ գնչուհիների խումբը մտել է գյուղ և մի քանի, այդ թվում նաև Պասոյի տղայի տնից գողություն արել: Երբ իմացել են գողության մասին, Պասոյի հարսը՝ Ռիման, ասել է. «Բան չկա, Ավետրանի խաչը մեջն է, ետ գուկա»: Մի քանի օր անց գողերը բռնվում են, ամեն ինչ ետ է վերադարձվում, այդ թվում նաև Ավետարանի ոսկյա խաչը:[12]

Այժմ էլ գյուղացիները հավատում են, որ մի օր Սուրբ Գիրքը վերադառնալու է:

---

[9] Ժողովուրդն անձնավորում է գիրքը, նրան վերաբերվում որպես ամենակարող սուրբ էակի, ուստի նա կարող է խռովել, պատժել, հեռանալ, և չվերադառնալ այնքան ժամանակ, մինչև իրեն խնամող մարդը չզգար իր թերացումները, չզղջար դրանց համար:

[10] Սուրբ Գևորգ սարն է, որի գագաթին մատուռ կա, ուր գտնվում է սրբի գերեզմանը:

[11] Մինչև1927թ. «Կարմիր Ավետարանը» գտնվել է ծորի մեջ, Ներքին Ղանլիջա գյուղում, Մարմաշեն վանական համալիրի մոտ:

[12] Պատմեց Վահրամաբերդ գյուղի բնակիչ Լիդա Հովհաննիսյանը:

Հավատում են, որ սուրբ գրքերն իրենց բարեգործությունների համար պահանջում են ոչ միայն հնազանդություն, ակնածանք և ուշադրություն, այլև ընծաներ, հակառակ դեպքում նրանք կարող են նաև պատժել:[13] Այդ է վկայում հետևյալ զրույցը. «Պասո մամից հետո Կարմիր Ավետարանի «խնամակալն» էր Արաք մամը: Նա ինը երեխա է ունեցել և բոլորը մահացել են մեկ կամ երկու տարեկանում: Ծնվում է նրա տասներորդ երեխան: Որդու քառասունքը լրանալու օրը Արաքը բարուրը տանում է Պապ, պարանոցից հանում է քյայրուբարը,[14] դնում սեղանին ու ասում. «Ըսիկ քեզի նվեր, իսկ էրեխիս թող ընձի»: Նա վերցնում է իր Մնացական որդուն ու գնում տուն:

Վահրամաբերդցիները մատուռները կոչում են նրանցում պահվող Ավետարանների անուններով (Կարմիր Ավետարան, Շեկ Ավետարան, Նարեկ), անվանում են նաև «Պապ»: Հաճախ կարելի է լսել. «Գնամ Պապը մոմ վառեմ» կամ «էրազիս վերևի Պապն եմ տեսել, էրթամ ուխտս էնեմ՝ գամ»: Պապ նշանակում է մեծ հայր, հայրապետ, նախահայր,[15] որը հայ օջախում մեծ հեղինակություն ուներ: Ուստի պատահական չէ սուրբ գրքերին և սրբավայրերին Պապ կոչելը:

Գևորգենց գերդաստանը գաղթել է 1915թ. Մշո Ռուստամ Գետուկ գյուղից՝ իրենց հետ բերելով նաև Շեկ Ավետարանը, որը կոչվում է **«Գևորգենց տան Շեկ Ավետարան»:**

Գաղթի ժամանակ Ավետարանը կապում են Գևորգենց Աբրահամի մեջքին: Իսկ Աբրահամը, որին հարազատները վստահել էին իրենց Սուրբ Գիրքը, կորչում է Թիֆլիսում: Իր ողջ կյանքի ընթացքում Աբրահամի դուստրը՝ Սոֆոն, կրկնում էր. «Ինչը օր ինկը կործրավ Ավետըրանը, ըդպես էլ Ավետըրանն իրան կործըրավ, օր գերեզման ըլա չունենա»:

Նրանց համագյուղացի Դերկանց տերտերը ճանապարհին գողանում է Ավետարանը և միանում գաղթականների այլ խմբի: Գևորգաններն այդպես էլ չեն գտնում տերտերին ու իրենց «գերդաստանի պահապանին»:

---

[13] *Հ. Մարության*, Տան սրբերի շուրջ, Եր., 2001, էջ 58:

[14] Դեղին սաթից վզնոց: Ըստ Հր. Աճառյանի՝ (Հայերեն արմատական բառարան, հ, Դ, 1979, էջ 549) քայռ նշանակում է պարանոցին կախելու մանյակ, այստեղից էլ քայամանեակ (մանեակ պարանոցի):

[15] *Հր. Աճառյան*, Հայերեն արմատական բառարան, հատոր Դ, Եր., 1979, էջ 25:

Գևորգենց գերդաստանը հաստատվում է Վահրամաբերդ գյուղում: Դերկանց տերտերի մահից շատ տարիներ անց պարզվում է, որ նա թաքնվել է Շիրակի մարզի Կամո գյուղում: Գևորգենց տան Շեկ Ավետարանը հիմա էլ Կամո գյուղում է:

Մինչև այսօր էլ Գևորգենց գերդաստանի ժառանգները «իրենց տանը զգում են Շեկ Ավետարանի շունչն ու ներկայությունը»: Փորձանքներից փրկվելիս կամ անելանելի վիճակներից դուրս գալիս փառք են տալիս Պապին, նրա զորությանը և խաչակնքում: Նրանք բոլորն էլ իրենց տներում ունեն սրբի անկյուններ՝ նվիրված Շեկ Ավետարանին»: Չնայած գիրքը գյուղում չէ, բայց շարունակում է հրաշքներ գործել: 1960-ական թվականներին Գևորգյան Վանիկի տուն է գալիս սպիտակցի մի անծանոթ կին՝ յոթնամյա հիվանդ երեխան գրկին: Նա պատմում է, որ երազում իրեն ասել են ուխտի գնալ Վահրամաբերդ՝ Գևորգենց տան Շեկ Ավետարան, և երեխան կառողջանա: Երեք շաբաթ օր անընդմեջ եկել են այստեղ ուխտի, և երեխան կարողացել է ինքնուրույն քայլել:

1910-ական թվականներին Մաթոսենց գերդաստանը Կաղզվանից գաղթում է Կարս, ապա հաստատվում Վահրամաբերդում: Նրանք Կաղզվանից բերել էին նաև իրենց Ավետարանը, որը պահվում էր Հովհաննիսյան Նիկոլայի տանը: Նրա կինը՝ Տիրունը, սիրով պահում ու խնամում էր **Սուրբ գիրքը:** Նրանց երեք որդիները՝ Աղասին, Անդրանիկն ու Արգինը կուսակցականներ էին, իսկ վերջինս գյուղի նախագահն էր: Տիրուն մամը, վախենալով, որ իշխանությունները կվնասեն իր որդիներին, որոշում է ազատվել Ավետարանից ու մի օր հարսների ներկայությամբ գիրքը գցում է թոնրի կրակի մեջ, բայց այն չի այրվում: Գիրքը կրակից հանելով՝ Տիրունը միայնակ տանում է այն և հորում հողամասում: Այդ օրը նրա աջ ձեռքը թուլանում է, և այդպես ապրում է մինչև կյանքի վերջը:

Տիրունի այս արարքից հետո սպանվում է ամուսինը, ապա երեք որդիները մեկնում են ռազմաճակատ: Հայրենական պատերազմից վերադառնում է միայն կրտսեր որդին, որի առաջին ընտանիքը քայքայվում է, մահանում են չորս թոռները և այլն:

Տղաների զոհվելուց հետո Տիրունը փորձում է գիրքը գտնել ու հանել հողի տակից, բայց ապարդյուն, մինչև հիմա ոչ մեկին հայտնի չէ, թե որտեղ է այն թաղված:

Նրա ժառանգները մինչև հիմա էլ զգում են տատի գործած մեղքի հետևանքները: 1988թ. երկրաշարժին նրա բոլոր ժառանգները կորուստներ են ունենում: Այդ բոլոր դժբախտությունները, որպես պատիժ, վերագրվում են Ավետարանին:

Գյուղի զորավոր սրբերից է Չախոյանների մոտ պահվող Նարեկը: Նախկին գյուղում այն պահվում էր Մարմաշենի վանահայր Հակոբ պապի տանը:

Տան սրբի հիմնական գիրքը **Նարեկն** է: Սրանից բացի մատուռում պահվում են **«Խորհրդատետր սրբազան պատարագի»**, **Սաղմոսագիրք**՝ գրաբարով և հայատառ թուրքերենով, **Տոնացույց** և **Երազահան ու լուսնային օրացույց**: Այս բոլոր գրքերին զորավոր ուժ է վերագրվում. դրանք միշտ խնամվել ու պահվել են սիրով, հավատքով ու ոգածությամբ: Մի ուշագրավ զրույց է հիշվում կապված «Նարեկի» ոետ, թե ինչպես է գիրքը հավատի բերել մի դեռատի օրիորդի:

Արաքսյայի[16] մայրն ամեն օր հանդիմանել է նրան «Նարեկի նկատմամբ անտարբեր լինելու պատճառով», իսկ նա ծաղրել է մորը՝ «ինչ-որ գրքի» անսահմանորեն նվիրվելու համար, սակայն ենթարկվելով մորը, մեկ շաբաթ մաքրել է Նարեկը: Մի օր էլ զայրացած ասել է. թե այդ գիրքն ի՞նչ կարող է անել իրեն և որ ինքը չի վախենում նրանից: Մի օր նրան հայտնվում է բարձրահասակ, սպիտակամորուս, երկար շորերով մի մարդ ու ասում. «Դու ինձ մի նայե (հետևիր), մերդ ինչ կսե՝ ձեռ առ, խնդա, գլուխդ էմպես բան բերեմ, որ սաղ կյանքդ չմոռանաս»: Արաքսյան լուրջ չի վերաբերվում այդ տեսիլքին:

Նրա աջ ոտքը մի օր սուր ցավում է, որն օրեցօր սաստկանում է ու բժիշկները ոչինչ չեն կարողանում անել: Վահրամաբերդցի Արաքսամը «նետ է դնում»[17] և դուրս է գալիս Իլլիի սուրբը: Նա ուխտի է

---

[16] Պատմեց Չախոյանների ավագ դուստր Արաքսյան:

[17] Նետ դնել. գուշակության մի յուրօրինակ ձև: Հարմարանքը իրենից ներկայացնում է անտակ մաղ՝ վրան մեխ: Նետ դնողը երկու ցուցամատով պահում է մեխի գլուխը և հարցնում Ավետարանից՝ հիվանդը սրբի՞ հիվանդ է, թե՞ բժկի: Որ բառի վրա մաղը սկսի պտտվել, ուրեմն դա է: Սա պարզելուց հետո նա տալիս է սրբերի անուններ, պարզելու համար, թե հիվանդը ո՞ր սրբի հիվանդն է: Մաղի պտտվելը դա էր հուշում: Այնուհետև հարցնում է, թե տվյալ հիվանդ-ուխտավորը ի՞նչ է հետը տանելու՝ մոմ, գառի մատաղ, աղավնի, աքլոր, թե որևէ այլ բան: Վահրամաբերդ գյուղում նետ են դրել Արաք մամը և Անահիտ մամը: Նրանց մահից հետո ոչ ոք չի զբաղվում գուշակության այս տեսակով, իսկ այդ մաղը մինչև հիմա պահվում է գյուղի «Կարմիր Ավետարան» մատուռում:

գնում Իլլիի «Հալիվոր» ավետարան և բուժվում, այդ օրվանից հավատալով Աստծուն, սրբերին, Նարեկի զորությանը:

Ըստ մեկ այլ զրույցի՝ Արաքսյան կորցնում է իր առաջին երկու երեխաներին: Յոթ Վերքում,[18] Հիսուսի արծանի մոտ աղոթելիս տեսնում է, որ Սուրբ Մարիամ Աստվածածինը Հիսուսի արծանի մոտից դանդաղ մոտենում է իրեն, ձեռքը ուսին դնում ու ասում. «Հանգիստ գնա, դա քոնն է»: Միայն հաջորդ ամիս է նա հասկանում, որ երեխայի է սպասում:

Մի **«Նարեկ»** էլ պահվում է Զադոյանների ընտանիքում: Գեղամ Զադոյանի մորը՝ Շողիկին, դեռ հին գյուղում՝ Ներքին Ղանլիջայում երազում սուրբն ասում է. «Մութ տեղն եմ, հանեք ընձի ըստեղից»: Շողիկը Արփաչայից հանում է գիրքը և տանում տուն: Որոշ ժամանակ անց գիրքը հանձնում է Պասոյի խնամքին, քանի որ իր երեխաները փոքր էին, և նա վախենում էր, որ այն կպատառոտեն: Հետագայում Շողիկը գիրքը վերցնում է ու պահում այն մինչև օրս:

Պասոյի խնամքին է հանձնվում նաև մեկ այլ Սուրբ գիրք՝ **Շեկ Ավետարանը**, որը մինչև օրս պահվում է «Կարմիր Ավետարան» մատուռում: Այս գիրքը պատկանել է Ներքին Ղանլիջայում հաստատված գաղթական Մխիթարին: Նրա որդին տղա է ունենում, բայց քառասունքը լրանալուց հետո «անկնունք են պահում»: Մի օր մայրը, որդուն բարուրելիս, գովում է նրան. «Հլը նայե ինչը է մեծըցե Հարությունս, հլը նայե ինչը է լավըցե...»: Որդուն կերակրել ու դրել է քնելու: «Երկու ժամ անց տեսանք, որ հոգի չկար քյոռպի մեջը: Ավետըրանը խոսըծըրավ մորըս, ախպերս էլ անկնունք էր՝ տերը չպահեց, տարավ: Էդ օրվանեն, մեղա՜ եմ քեզի, Տե՜ր Աստված, ինչը օր էդ գիրքը մեր դուշմանն էղներ, տարանք ու դրինք Կարմիր Ավետրանը, տվինք, օր Պասոն պայե: Մինչև հըմի էլ Մնացի մոտն է»:

Չնայած գիրքը տանը չի պահվում, տանեցիները հաճախ ականատես են լինում անբացատրելի երևույթների: Ընտանիքի հարսը՝ Սաթենիկը, պատմում է, թե ինչպես է Պապը ման գալիս տան մեջ, զրուցում, սեղան նստում իրենց հետ, պառկում, հանգստանում, Սրբին ականատես են լինում տան բոլոր անդամները միաժամանակ՝ երեխաներից մինչև մեծերը:

Մինչև 1988թ. երկրաշարժը Վահրամաբերդ գյուղի դպրոցի նախկին տնօրեն Փառանձեմ Մովսիսյանն իր տանը պահում էր **«Մատթե-**

---

[18] Յոթ Վերք կամ Ս. Աստվածածին եկեղեցին գտնվում է Գյումրիում: Կառուցվել է 1843-56 թթ.:

ոս Ավետարանը»: Այն բերվել էր Մոսկվայից, սիրով պահում ու խնամում էր իր տան սրբի ամկյունում: Տունը երկրաշարժից հիմնահատակ ավերվում է, Փառանձեմը տեղափոխվում է էջմիածին, իր հետ տանելով փլատակների տակից փրկած Ավետարանը: 2005թ. տասնութամյա Աբրահամ Չախոյանը երազ է տեսնում, ըստ որի նա պետք է վերակառուցեր փլված տան այն հատվածը, որտեղ դրված է եղել Ավետարանը: Շինարարական աշխատանքների ժամանակ Աբրահամը փլատակների տակից հանում է Սրբին պատկանող բազմաթիվ մասունքներ և այն կարմիր շուշպան, որով փաթաթված է եղել «Մատթեոս Ավետարանը»: 2007թ. Փառանձեմը ուխտի գալով նորակառույց մատուռ՝ Աբրահամին ասում է. «Ավետարանը չի մնում, ուզում է հետ գալ»:

Վահրամաբերդ գյուղում բարեպաշտ ու աստվածասեր տղամարդկանց «Տացու»[19] էին անվանում: Բոլորը հաշվի են նստել նրանց հետ, ընդունել նրանց տված բարի խորհուրդները: Պարկեշտ ու ազնիվ մարդ լինելուց բացի, նրանք օժտված են եղել աղոթելու և բժշկելու շնորհով: Հովասափի կամ Տացուի Սուրբ գիրքը այսօր էլ պահվում նրա տանը: Այն «Աստվածաշունչ մատյան» է, որին անվանում են **«Մայրիկ Մայր Աստվածածին»**: Այս գրքով Տացուն բուժել է շատ հիվանդների: Տիկին Սիրանույշը պատմում է, որ իր սրբին երեք անգամ տեսել է երազում: Նա ֆայտոնով, կարմիր ձին թամբած մտել է տուն և ինչ-որ բան զգուշացրել և, բարեբախտաբար, ամեն ինչ բարի ավարտ է ունեցել:

Այսպիսով, Վահրամաբերդում պահվել են տասներեք ձեռագիր ու տպագիր գրքեր՝ Ավետարաններ, Ճաշոցներ, Նարեկներ և այլն, որոնց վերաբերյալ ստեղծվել և առ այսօր պատմվում են զրույցներ: Ցավոք դրանցից չորսն այժմ գյուղում չեն, բայց բնակիչները հավատում են, որ գալու է այն օրը, երբ բոլորը «Կրկին մեկտեղվելու են և շարունակելու են իրենց երկրային առաքելությունը»:

Ամփոփելով կարելի է եզրակացնել, որ բոլոր սրբերն էլ հրաշագործ են, բժշկող, օգնող, սատարող, մխիթարող, նախազգուշացնում են սպառնացող վտանգի կամ փորձանքի մասին, բայց միևնույն ժամանակ «պահանջկոտ են ու քինախնդիր»:

---

[19] «Տիրացու» բառի կրճատ ձևն է: Այս անունը տրվել է Մաթևոս Հովհաննիսյանին և Հովասափ Գրիգորյանին:

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱՀ	Ազգագրական հանդես
ԱԲԱ	Ազգագրության բաժնի արխիվ
ԲԲԱ	Բանահյուսության բաժնի արխիվ
ԴԱՆ	Դաշտային ազգագրական նյութեր
ԵՊՀ	Երևանի պետական համալսարան
ԷԱԺ	Էմինյան ազգագրական ժողովածու
ՀԱԲ	Հայ ազգագրություն և բանահյուսություն
ՀԱԻ	Հնագիտության և ազգագրության ինստիտուտ
ՀԱՊԹ	Հայաստանի ազգագրության պետական թանգարան
ՀԺՀ	Հայ ժողովրդական հեքիաթներ
ՀՊԹ	Հայաստանի պատմության թանգարան
ՊԲՀ	Պատմա-բանասիրական հանդես
ИЛ	Институт литературы

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Լևոն Աբրահամյան
ՏՐԻՔԱՏԵՐ՝ ՀԱՅՏՆԻ ԵՎ ԱՆՀԱՅՏ 5
Յուլիա Անտոնյան
ՔԱՀԱՆԱՆ ՄՏՆՈՒՄ Է ԳՅՈՒՂ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԵՐԱՀԱՍՏԱՏՄԱՆ ԱՐԴԻ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՈՐՈՇ ԱՍՊԵԿՏՆԵՐ 10
Լիլյա Ավանեսյան
ԳՈՐԳԸ ԱՆԴՐԱՇԽԱՐՀԻՑ 16
Մխիթար Գաբրիելյան, Արտակ Դաբաղյան
ՎԵՐԱԲՆԱԿՈՒԹՅԱՆ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԱՌՈՒՄՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ 21
Հասմիկ Գալստյան
ՄՆԱՀԱՎԱՏԱԿԱՆ ԶՐՈՒՅՑՆԵՐ (ըստ Վահրամաբերդ գյուղի սուրբ գրքերի վերաբերյալ պատմությունների) 28
Միհրան Գալստյան, Համլետ Սարգսյան
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԸ ԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ 38
Արա Գուլյան
ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՄԻ ԲԱՂԱԴՐԻՉԻ ՄԱՍԻՆ 46
Ирина Долженко
НЕКОТОРЫЕ ЧЕРТЫ КУЛЬТОВОЙ ПРАКТИКИ МОЛОКАН АРМЕНИИ: РЕЛИГИОЗНЫЕ ПЕСНОПЕНИЯ 53
Եվա Զաքարյան
ՍԱՏԱՆԱՅԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ 59
Աղասի Թադևոսյան
ՍՈՑԻՈՆՈՐՄԱՏԻՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՈՐՈՇ ԴՐՎԱԳՆԵՐԻ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 1997-2007 ԹԹ. 70
Աստղիկ Իսրայելյան
ՔԹԻ ՕՂԵՐ 75
Լուսինե Խաչատրյան
ՄԱԶՐՈՂՈՒ ՍՈՒՐԲ ՕՋԱԽ 81

Դահիսա Խաչատրյան
ՄԱՐԻԱՄ ԱՍՏՎԱԾԱԾՆԻ ԿԵՐՊԱՐԸ ՀԱՅ ՁՈՆԵՐԳԱՅԻՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ 88
Վիգեն Ծատրյան
ԽԱԼԴԻ ԵՎ ՈՒԱՐՈՒԲԱԻՆԻ ԴԻՑԱՆՈՒՆՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ 97
Զորիկ Ծատուրյան
ՁՈՒՐԸ ՈՐՊԵՍ ՏՈՏԵՄ ՆԱԽՆԻ «ՍԱՍՆԱ ԾՌԵՐ» ԷՊՈՍՈՒՄ 101
Гоар Карагезян
К ВОПРОСУ О ФОЛЬКЛОРНЫХ СЮЖЕТАХ В ТРУДЕ ХЕТУМА ПАТМИЧА «FLOR DES ESTOIRES DE LA TEME D`ORIENT» 109
Ռուբեն Կարապետյան
ՊԱՏՄԱԿԱՆ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՕԳՏԱԿԱՐՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ 115
Նաիրա Կիլիչյան
«ՅԵԴ ՈՒ ԱՌԱՋ» ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՐԻ ՀՈՒՆԱԿԱՆ ՁՈՒԳԱՀԵՌԸ 120
Արսեն Հակոբյան
1918Թ. ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1988Թ. ՀԱՅ-ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ (մի դեպքի օրինակով) 126
Թամար Հայրապետյան
ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԻ ՔՆԱՐԵՐԳՈՒԹՅԱՆ ԱՌԱՍՊԵԼԱԲԱՆԱԿԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ 132
Հասմիկ Հարությունյան
«ԱՆՈՒՇ» ՊՈԵՄԸ ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ՏՈՆԻ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐ 144

Սարգիս Հարությունյան, Էսթեր Խեմչյան,
Մարինե Խեմչյան
ԱԴՐԲԵՋԱՆԻՑ ԲՌՆԱԳԱՂԹՎԱԾ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ
ԺՈՂՈՎՐԴԱԳԻՏԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԸ
(ըստ 2007 թ. Տավուշի խմբարշավի արդյունքների) 152
Սուրեն Հոբոսյան
ԽԱՂՈՂԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ
ՄԵՂՐԻՈՒՄ 160
Ալվարդ Ղազիյան
ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵՔԻԱԹՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ
ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ 166
Աշոտ Մանուչարյան
ՎԻՄԱԳԻՐ ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԽՈՒԵՐԱՅԻ
ՀԱՄԱՃԱՐԱԿԻ ՄԱՍԻՆ 172
Նիկոլ Մարգարյան
ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈԼՈՐՏԻ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ
(ըստ Գյումրիի և Իջևանի նյութերի) 177
Հարություն Մարության
ՄԱՔՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՈՒ
ԲՆՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ
ԸՆԿԱԼՄԱՆ ՀԱՐՑԸ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԳՅՈՒՂԵՐՈՒՄ
(ըստ Տաթև և Գոշ գյուղերի նյութերի) 185
Սարգիս Մխիթարյան
ՏԻԳՐԱՆ ՄԵԾԸ ՀԱՅ ՎԻՊԱԿԱՆ
ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ 191
Սամվել Մկրտչյան
ՎԱՐԴԱՎԱՌԻ ԷԹՆՈՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏԱՎՈՒՇՈՒՄ 199
Լիլիթ Մկրտումյան
ԲԱՆԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՈՒՄ 212

Карине Налбандян, Анна Паликян, Нвард Кочар
РЕГИОНАЛЬНОЕ ИССЛЕДОВАНИЕ АССИРИЙЦЕВ ПО ДАННЫМ ДЕРМАТОГЛИФИКИ И ОДОНТОЛОГИИ 219
Ռաֆիկ Նահապետյան
ՆՈՐԱՁՆԻ ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՆՐԱ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՃԱՆԱՉՄԱՆ ՓՈՒԼ 224
Գայանե Շագոյան
ՀԱՐՍԱՆԻՔՆ ԻԲՐԵՎ ՀԱՅ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՆԻՇ ԵՎ ՀԱՅ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՆԻՇԵՐԸ ՀԱՅՈՑ ՀԱՐՍԱՆԻՔՈՒՄ 232
Ալինա Պողոսյան
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎԱՐՔՈՒՄ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ԸՆԿԱԼՄԱՆ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՐԴԻ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 238
Սվետլանա Պողոսյան
ԿՆՈՋ ԵՎ ՏՂԱՄԱՐԴՈՒ ԽՈՐՀՐԴԱՆԻՇԵՐԸ ՀԱՅՈՑ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ
(ավանդական և ժամանակակից ընկալումներ) 243
Արմեն Սարգսյան
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՍՈՒՅԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԵՐԳԻՇԱԿԱՆ ՄԱՆՐԱՊԱՏՈՒՄՆԵՐՈՒՄ 250
Կարլ Սեղբոսյան
ՆԵՐԸՆՏԱՆԵԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՇԻՐԱԿՈՒՄ
(XX դարի կեսեր) 259
Լիլիթ Սիմոնյան
ՏՈՄԱՐԻ ԵՎ ՏՈՄԱՐԱՅԻՆ ԵՐԳԵՐԻ ՀԵՏՔԵՐԸ ՀԱՅ ՀՄԱՅԱԿԱՆ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՂՈԹՔՆԵՐՈՒՄ 265
Վերժինե Սվազլյան
ԺՈՂՈՎՐԱԳԻՏԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ԱՄՆ-Ի ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ
(ըստ 1979, 1990 և 2001թթ. ուղևորությունների) 273
Արմենուհի Ստեփանյան
ԻՐԱՆԱՀԱՅԵՐԻ ՆԵՐԳԱՂԹԸ 1946-47ԹԹ. 282

Գոհար Ստեփանյան
ԲԱՐԵԿԵՆԴԱՆՅԱՆ ՇՐՋԱԴԱՍՈՒԹՅՈՒՆԸ
ԱԲԵՂԱԹՈՂԻ ԾԵՍՈՒՄ 287
Лилия Варданян
ИРИНА ДОЛЖЕНКО – ИССЛЕДОВАТЕЛЬ
РУССКОГО НАСЕЛЕНИЯ АРМЕНИИ..... 294
Նվարդ Վարդանյան
ՄՍԵ ՀՄԱՅԻԼԻ ՄՈՏԻՎԸ ՀԱՅ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ 305
Սվետլանա Վարդանյան
«ՏԱՆ ՍՈՒՐԲ» ԵՐԵՎՈՒՅԹԻ ԱՐՑԱԽՅԱՆ
ԴՐԴԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ 311
Լիանա Քևնակսզյան
ԿՐՈՆԱԿԱՆ ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՈՑ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ՀԱՄԱԼԻՐՆԵՐԻ ԵՎ ԵՆԹԱՀԱՄԱԼԻՐՆԵՐԻ ՎՐԱ 317
Ռուբեն Օհանջանյան
ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՍՊԱՌՄԱՆ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ
(ըստ Տավուշի մարզի նյութերի)..... 325
ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 333

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹ

XIV

Նյութեր
հանրապետական գիտական նստաշրջանի

НАРОДНАЯ КУЛЬТУРА АРМЯН

XIV

Материалы
республиканской научной сессии

Համակարգչային տեքստը հավաքված է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի համակարգչային կենտրոնում

Ձևավորումը՝ Ս. Հակոբյանի

Տպաքանակը՝ 200
Տպագրվել է «Գասպրինտ» տպագրատանը